12180

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 04 » 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0183-21

Ձեռնարկողը՝ ***«Ապրիում պրո սթուդիո» ՍՊԸ***
ՀՀ, ք. Երևան, Մ.Բաղրամյան 1 փկղ, 14շ, բն. 12

Գործունեությունը՝ ***«Գեղարքունիք-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0183-21

< 04 > 10 2021թ.

«Գեղարքունիք-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Ատրիում պրո ստուդիո» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱՌԳ հաշվետվություն
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ

Ներածական մաս. «Գեղարքունիք-4» տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (այսուհետ ՄՄՀՏՊՓ) նախագծերը ներառում են Ծովինար, Արծվանիստ, Ախպրաձոր, Ակունք, Գեղաքար, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ, Վանեւան, Տորֆավան) ն Գեղարքունիքի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծի "Շրջակա միջավայրի բարելավման ու պահպանման միջոցառումներ" բաժինը մշակված է ՄՄՀՏՊՓ համապատասխան, հաշվի առնելով նշված համայնքների 2017-2025թթ. զարգացման ծրագրերը:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք-4» ՄՄՏՀՆ նախագիծը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձեւավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական- տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի եւ համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական եւ մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի եւ ֆունկցիոնալ գոտեւորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ նախադրյալների եւ բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական

տնտեսական եւ աշխատանքային ռեսուրսների համալիր եւ արդյունավետ օգտագործմամբ բնական պաշարների (օդ, ջուր,հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության արդյունքները՝ տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների, կաթսայատների ճիշտ տեղադրման անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ, կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Գեղարքունիքի մարզի վերը նշված համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի զարգացման ծրագրերի մշակման ժամանակ շրջակա միջավայրի տարրերի (ջուր, օդ, հողաբուսական ծածկույթ, կենդանական աշխարհ) պահպանության միջոցառումների մշակումը սերտորեն կապված է տարածքի հատակագծային կազմակերպման խնդիրների հետ:

Գեղարքունիքի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ զարգացման ծրագիրը նախատեսվում է կազմել կայուն զարգացման սկզբունքների հիման վրա, որը տնտեսական զարգացման բոլոր նախապատվությունները համադրում է բնական միջավայրի ինքնավերարտադրունակության հետ:

«Գեղարքունիք-4» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերը ընդունված են համաձայն СН245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր»:

1. Էլեկտրաենթակայանների ՍՊԳ-ի չափերը ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ II-12-77 «Պահպանություն աղմուկիցե և ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկիցե նորմերի և կանոնների, ԳՈՍՏ «Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմաներ և աղմկային փորձարկումների մեթոդներե: ՍՊԳ-ների չափը ընդունված է 20 մ:

2.Էլեկտրահաղորդման գծերի (ԷՀԳ) պաշտպանական գոտիների չափերը ընդունված են համաձայն «Մինչև 1000Վ էլեկտրական ցանցերի պահպանման կանոններե-ի հիման վրա՝

Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք նպաստելու են տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, լուծվելու են տարածքի հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրված է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական, տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

- գետնի վրա եզրային լարերի պրոեկցիայի հեռավորությունը:

3. Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերը ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված, համաձայն ՍՆ և Կ 2.05.06-85 «Մայրուղային խողովակաշարերե:

4. Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերը ընդունված են համաձայն Սն և Կ 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներե:

5. «Խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներե N2-III-Ա2-2 սանիտարական նորմերը և կանոնները

հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանը:
6. Գերեզմանների ՍՊԳ-ն ընդունված է 300 մ, ինչպես նաև հաշվի է առած ՀՀ կառավարության նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասինե 2006 թվականի N1910-ն որոշման հավելված 4-ի 7-րդ կետը:
7. Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ: Աղբահավաք վայրերի քանակը՝ 15:
8. Կենսաբանական մաքրման կայանի ՍՊԳ-ն ընդունված է 300մ: ՍՆ և Կ 2.04.03-85 Կոյուղի: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ:
9. Օրգանական ծագման թափոնների վարակազերծման և թաղման վայրերի ՍՊԳ-ն ընդունված է 300մ:
Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.
- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված եւ միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում եւ էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի եւ առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային եւ ինժեներա-տեխնիկական ենթակառուցվածքների ձեւավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձեւավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
«Գեղարքունիք-4» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 58216,12 հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 25684 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ: Նշված համայնքներում ռեսուրսների հիմնական տեսակներն են՝ ջրեր, հողեր, գեղատեսիլ եւ տեսարժան վայրեր տուրիզմի զարգացման համար: Տարածքում առկա են մարդկային ռեսուրսներ:
«Գեղարքունիք-4» գյուղական համայնքներում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային եւ կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ հիմնախնդիրներ, որոնք մանրամասն նկարագրված են նշված համայնքների զարգացման ծրագրերում:
Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ ձկնաբուծությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը եւ առեւտուրը: Ներկայումս համայնքների մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի եւ հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի եւ ավտոտրանսպորտի արտանետումներով: Հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին, արտադրական արտանետումները աննշան են: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով համայնքներում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):
«Գեղարքունիք-4» միկրոռեգիոնի համայնքները հիմնականում գազաֆիկացված են 71-81%, բացարությամբ Գեղաքար, Ախպրաձոր, Նորակերտ, Վանեւան, Տորֆավան բնակավայրերի: Ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի եւ փայտի ծախսից ելնելով

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից եւ ավտոտրանսպորտից կազմում է 1000,0 տ/տարի: Հիմնականում համայքների մթնոլորտ վնասակար արտանետումների հետեւանքով տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 25,93 մլն. դրամ տարի: Մթնոլորտ արտանետումների հիմնական ներդրումը՝ 91,4 %, ավտոտրանսպորտն է: Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են եւ մեքենաների անցուդարձը ցածր է: Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից տրանսպորտի արագությունից եւ շարժման ինտենսիվությունից: Մեծ Մասրիկ գյուղով անցնում է ավտոմայրուղի Մ- 14: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ "ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-4" տարածաշրջանի բնակավայրերում ձայնի էկվիվալենտ մակարդակը 25 մ հեռավորության վրա ճանապարհից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը կկազմի 40-45 դԲԱ, նորման 45-55 դԲԱ:

«Գեղարքունիք-4» տարածաշրջանը ներառում է 58216,12 հա հողեր, այդ թվում՝

- գյուղատնտեսական հողեր – 51483,66 հա,
- բնակավայրեր – 3136,69 հա ,
- արդյունաբերության, ընդերք օգտագործման եւ այլ արտադրական նշանակության – 492,94 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի - 76,27 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ – 2824,27 հա,
- հատուկ նշանակության – 7,92 հա,
- անտառային – 50,6 հա,
- ջրային – 143,77 հա,
- պահուստային – 0 հա:

«Գեղարքունիք-4»-ի հողածածկույթը հիմանականում ներկայացված է գետահովտադարավանդային մարգագետնացած կոպճային, գետահովտադարավանդային մարգագետնաճահճային տղմային հումուսագլեյացված եւ սեւահող տիպիկ ալրային կարբոնատային հողերով: Հողի հիմնական աղտոտումը կատարվում է ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային եւ արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտերից: Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 3136,69 հա մակերես: Համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը՝ 15:

Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Համայնքներում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը եւ տարեկան քանակը կազմում է 6421 տ/տարի:

Թափոնները առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում: Թափոնները դասակարգվում են հետեւյալ կերպ՝ Բժշկական այլ թափոնների, բացառությամբ՝ վարակիչ թափոնների, վնասազերծումը իրականացվում է յուրաքանչյուր կազմակերպության կողմից բժշկական թափոնների անվտանգ գործածության մեթոդական ուղեցույցում (այսուհետ՝ մեթոդական ուղեցույց) ընդգրկված եղանակներով: Մեթոդական ուղեցույցը հաստատվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով: Ընտրված եղանակը ներառվում է կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով: Բժշկական թափոնների որոշ տեսակներ կարող են տրամադրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված այլ կազմակերպություններին՝ դրանք վերամշակելու, վնասազերծելու, պահպանելու, փոխադրելու եւ/կամ տեղադրելու նպատակով: Յուրաքանչյուր դեպքում տրամադրվող թափոնների

տեսակները եւ քանակը սահմանվում են կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով: Վերամշակման նպատակով բժշկական թափոններն այլ կազմակերպություններին տրամադրվում են բացառապես ձեւափոխված այնպես, որպեսզի բացառվի դրանց կրկնակի օգտագործումը բժշկական նպատակներով: Արգելվում է բժշկական թափոնների բեռնաթափումը բաց աղբավայրերի մակերեսներին:

Թափոններն առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում: Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 1,8 տ/տարի: Թափոնները բաժանվում են 2 խմբի՝

- օգտագործման ենթակա; թափոնների ընդհանուր քանակը կազմում է 0,8 տ/տարի:
- ոչ օգտագործելի թափոնների քանակը կազմում է 0,1 տ/տարի:

Քանի որ, համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայր:

«Գեղարքունիք-4» -ի տարածաշրջանի համայնքներում տեղակայված է 15 գերեզմանոց ընդհանուր ≈ 23 հա տարածքում: Գերեզմանոցները գործող են: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ: Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները:

«Գեղարքունիք-4» համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.

- ոռոգման համակարգի զարգացում եւ բարեփոխում,

Նախատեսված են այգիներ, սպորտ-հրապարակներ՝ կանաչ գոտիով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ եւ այլն: Բացի դրանից նախագծված են նաեւ մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի եւ այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

Առաջնային ուղղություններ են դառնում տարածքային զարգացման այն հիմնական ուղղությունները, որոնց մեջ ներդրումները նպաստավոր են այդ ոլորտների կայացման եւ զարգացման համար: Այդ ուղղությունների ընտրությունը կխթանեն.

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
- շրջակա միջավայրի բարելավումն եւ պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի եւ սոցիալ- կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական եւ տեխնածին վտանգավոր երեւույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը:
- միջպետական եւ հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում եւ կազմակերպում,
- բացառել գյուղատնտեսական բարձորակ եւ հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաեւ պատմամշակութային եւ բնական հուշարձաններին վնաս պատճառումը:
- հիմնական գործառնական գոտիների վերանայում եւ հստակեցում,
- բոլոր համայնքների գազաֆիկացում,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում եւ ընդլայնում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր գյուղական համայնքների կոյուղացում,
- գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում եւ գործարկում,
- նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արեւային էներգիա եւ բիոգազ,

- նախատեսել աղբի տեսակավորում:

«Գեղարքունիք-4» տարածաշրջանը ներառում է 104048.0 հա հողեր: Տարածքային պլանավորման նախագծով հողերի նպատակային նշանակության հողատեսքի, գործառնական նշանակության եւ զբաղեցրած տարածքների էական փոփոխություն չի նախատեսվում:

Հեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի եւ հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի եւ ավտոտրանսպորտի արտանետումները: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրասպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 96,2 %- ը: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից եւ ավտոտրանսպորտից կազմում է 1097,16 տ/տարի: Մթնոլորտ վնասակար արտանետումներից «Գեղարքունիք-4» համայնքներից տարածաշրջանի տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 26,42 մլն. դրամ / տարի: Հեռանկարում արտանետումները ջեռուցումից կնվազեն տարեկան 47,01 տ/տարի ի հաշիվ ջեռուցման նոր տեխնոլոգիաների:

«Գեղարքունիք-4» տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի եւ աշնանային հորդ անձրեւների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երեւույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքների համար առաջարկված է հեղեղատար առուների նախատեսում:

«Գեղարքունիք-4» տարածաշրջանը ներառում է 58216,12 հա հողեր: Քանի որ հողային ֆոնդում պահուստային հողեր չկան, ապա հողերի նպատակային նշանակության փոփոխությունից հետո ընդհանուր տարածքի մակերեսը փոփոխության չի ենթարկվի:

Նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, այրել եւ հողով ծածկել, մինչեւ ամբողջ համայնքների համար աղբամշակման գործարանի նախագծումը եւ կառուցումը, կամ կազմակերպել աղբի տեսակավորում: Նշված համայնքներում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) ընդհանուր քանակը հեռանկարում կկազմի ≈ 7063,25 տ/տարի: Գեղարքունիքի մարզպետարանը առաջարկում է բոլոր 15 համայնքների համար նախատեսել աղբի հեռացման վայր տեսկավորման եւ վերամշակման համար::

Յուրաքանչյուր գյուղական համայնքում տեղակայված է 1 գերեզմանոց: Ընդհանուր թիվը կազմում է 15 հատ, իսկ ընդհանուր տարածքը կազմում 23 հա: Գերեզմանոցները գործող են: Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով եւ գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

«Գեղարքունիք 4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) եւ հետնախագծային վերլուծություն: Դա թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել եւ դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ եւ արդի հեռանկարային

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաեւ տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները: Մշտադիտարկումների արդյունքների հիման վրա իրականացված հետնախագծային վերլուծությունը թույլ կտա հետագա քաղաքաշինական հիմնադրույթային փաստաթղթերում ներառել տնտեսության զարգացման առավել իրատեսական ոլորտները, ներդրումային ծրագրերի գրավչության բարձրացմանը, այս ամենը համադրելով տարածաշրջանի բնապահպանական պահանջների, նորմերի եւ սահմանափակումների հետ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ /ՁԵՎ 3/				
Տեխնիկատնտեսական ցուցանիշները		Չափման միավոր	Փաստացի	Հեռանկարային
1	ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	հա	58216.17	58216.17
2	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	3136.69	3293.954
3	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	484.307	380.976
4	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	484.307	380.976
5	ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	հա	2822.66	2901.971
6	ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	7.92	7.92
7	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	հա	51479.54	51205.337
8	ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	հա	50.6	50.6
9	ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	143.77	143.77

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ատրիում պրո ստուդիո» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի «Գեղարքունիք-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման ՇՄԱՌԳ հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան